«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 55-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ և 14-րդ մասերով.

«13. Եթե կենսաթոշակը վճարելը դադարեցվել է, և մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներկայացվում է կենսաթոշակ վճարելը վերսկսելու դիմում, ապա այդ դիմումի հիման վրա կենսաթոշակը վճարելը օրենքով սահմանված կարգով վերսկսելու դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու ամսվան նախորդող՝ մինչև 2019 թվականի մարտի 1-ն ընկած այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել (եթե կենսաթոշակառուն, իսկ անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ կենսաթոշակառուն և նրա օրինական ներկայացուցիչը կենսաթոշակ վճարելը վերսկսելու դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ գտնվել են Հայաստանի Հանրապետությունում)։

2020 թվականի մարտի 1-ից հետո մահացած կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը վճարելու դիմումը մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներկայացնելու դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է կենսաթոշակառուի մահվան ամսվանից հաշված՝ մինչև 2019 թվականի մարտի 1-ն ընկած այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում նա կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել։

14. Եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է մինչև 2021 թվականի մարտի 31-ը, ապա կենսաթոշակ նշանակվում է՝

1) կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու (այդ թվում՝ կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու) օրվանից, եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում.

2) բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում.

3) կերակրողի մահվան (սույն օրենքով սահմանված դեպքում՝ անհայտ կորելու) օրվանից (բայց ոչ շուտ, քան կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից), եթե կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացվել է կերակրողի մահվան (սույն օրենքով սահմանված դեպքում՝ անհայտ կորելու) օրվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում.

4) զինծառայությունից արձակվելու օրվանից, եթե սահմանված կարգով զինվորական ծառայությունից արձակված զինծառայողը դիմել է այդ օրվանից հետո՝ տասներկու ամսվա ընքացքում.

5) կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարելու օրվանից, եթե անձը կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարելու օրվա դրությամբ ունի այլ տեսակի կենսաթոշակի իրավունք և այդ տեսակի կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացրել է կենսաթոշակ ստանալու իր իրավունքը դադարելու օրվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում:»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Եթե 2020 թվականի մարտի 1-ից հետո՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացված՝ սույն օրենքի 1-ին հոդվածում նշված դիմումի հիման վրա չվճարված կենսաթոշակի գումարը հաշվարկվել և վճարվել է սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված կարգից տարբեր կարգով, ապա մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներկայացված դիմումի հիման վրա այդ գումարը վերահաշվարկվում է սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված կարգով և վճարվում է վերահաշվարկված և փաստացի վճարված գումարների տարբերության չափով։ Այս դեպքում կենսաթոշակի վճարման ենթակա գումարը վճարվում է վերահաշվարկ կատարելու ամսվան հաջորդող ամսվա կենսաթոշակի (մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի) վճարման համար սահմանված կարգով (եղանակով)։